

«ՊԱՏԱՆԻ ՄԱԹԵՄԱՏԻԿՈՍ» Օլիմպիադա

5-րդ ԴԱՍԱՐԱՆ

27.03.2026 թ

Տևողությունը – 2 ժամ 30 րոպե

**Խնդիր 1:** Դավիթը 202520252025 բազմանիշ թվի մի քանի թվանշաններ ջնջեց այնպես, որ ստացված թվի թվանշանների գումարը լինի 15 և թիվը լինի ամենամեծը: Գտնել Դավիթի ստացած թիվը:

**Խնդիր 2:** Գրտախտակին գրված են 1-ից մինչև 11 բոլոր բնական թվերը: Լևոնը այդ թվերից ընտրում է մեկ հատ թիվ այնպես, որ մնացած թվերի գումարը բաժանվի իր ընտրած թվին: Քանի՞ եղանակով նա կարող է այդ ընտրությունը կատարել:

**Խնդիր 3:** Արմենը գրեց եռանիշ թիվ, որի թվանշանները իրարից տարբեր են: Այնուհետև այդ եռանիշ թվի վերջին երկու թվանշանների տեղերը փոխեց և այն գումարեց սկզբնական եռանիշ թվին: Արդյունքում ստացված քառանիշ թվի երկրորդ և երրորդ թվանշաններով կազմված թիվը 77 է: Գտնել այդ եռանիշ թիվը:

**Խնդիր 4:** Չորս թիմերի Ֆուտբոլի առաջնությունում յուրաքանչյուր թիմ մյուսների հետ անցկացրեց մեկական խաղ: Յուրաքանչյուր հաղթանակի համար թիմը ստանում է 3 միավոր, ոչ-ոքիի համար՝ 1, իսկ պարտության համար՝ 0 միավոր: Առաջնության վերջում պարզվեց, որ միայն երկրորդ տեղը գրաված թիմն է հավաքել 3 միավոր: Առաջնությունում քանի՞ խաղ է ավարտվել ոչ-ոքի: